5. ԿՈՋՆԻ ՏԸՂԱՆ

Ինըմ ա, չինըմ մին մարթ, մին կընեգյ։ Ըտրանց խոխա չի ինըմ։ Ըտրանք շատ քյասիբ ըն ինըմ։ Ամմեն օր մարթը նան կընեգյը ուրուր իրեար եշըմ ըն, սուս անըմ։ Լոխճան շատ քընենքյ ըն անըմ խուլխի գա̈րգա̈։

Էտ մարթն ասըմ ա. — Թա մըեղ մին խոխա չինի՞, բա մըեր կոճին տակին մին խուլխու ծեն չի կյա՞։

Անց ա կընենըմ մին խիլլա̈ վախտ։ Մին գոնըմ էլ էտ մարթը ծըմական ճըեխ պերելիս, ճընապարին, մին չըփարի տակի մին կողնու ճուտ ա ճարըմ, յոր օնըմ, տոն պըերըմ։

Կողնուն տանը թախտին տակին ըն պահըմ։ Մին օր էլ մարթը-կընեգյ խոսըմ ըն էլհա խոխի անա, վըեր ուրա̈նց խոխա չօնին, էտ կողնին թախտին տական տուս ա կյամ, մարթի մնան խոսըմ, ասըմ.

— Ցըես ծըեր տըղան ըմ, վախիլ միք, յըես ծըեզ լա̈վ ըմ պըհելու։

Մարթըկնեգյ մընըմ ըն զարմացած, տափան կացած։ Կողնին էլհա խոսըմ ա, ասըմ. — Ցըես ծըեր տըղան ըմ, քյեցիք, Թաքավերին ախճիգյը ինձ մըհար օղեցիք։

Էտ կընեգյը ասըմ ա. — Թա Թաքավերը ուրա̈ն ախճիգյը կողնուն կտա՞՞։

Մարթն ասըմ ա. — Քյինի օղի իլի՞, բա̈լքյա̈ս տըվավ։

Էր ըն կընենըմ մարթըկընեգյ քյընըմ Թաքավերին գա̈րբա̈ղին հարանըքարին նըստըմ։

Կյամ ըն ըտրանց տանըմ Թաքավերին կուշտը։ Ըտրանք հըմըն-

չելավ, կոչ-կոչ կյալավ, լուզուն փալթանգյ շինած ասում ըն.— Թաքավերը ապրած կենա, մունք եկալ ընք ծրեր ախճիգյը օգինք մըեր արդին հետ։

Թաքավերը շատ ա ըչըղվում, կըզնըվում, օղում ա թա ըտրանց կլոխնին կըտրիլ տա, մին էլ մտածում ա, թա ըտրանք հի՞նչ ըն, վրեր հալա կըլխընին կըտրելի հրամման էլ տա։ Վրեռում ա ըտրանց մին հենց պրեն ասի, վրեր քյինին, էլ կյան վրեչ։

Ըտրանց ասում ա.— Թա իմ պալատիս մընան մին ղաշանգյ պալատ կըշինիք, հալա իմ պալատաս էլ լավ, ախճիգյըս ծրեզ կըտամ։

Մարթըկընեգյ կյամ ըն տոն, նաղլ անում ուրանց կոզնի տըղին։

Կոզնի տըղան ասում ա. — Վրեչի՛նչ, ա՛ հար, քյինի ըշտըղան ինձ եր ըս կալալ, ընդեղ ասի. «Կոզնին մին կտոր մարմար ա օղում»։ Էտ մարմարը քյըեզ ըն տալու, եր կալ պրեր, թաքավերին պալատին առաչին եր քրցի։

Էտ մարթը իտի էլ անում ա։ Քրշերը թաքավերը եր ա կրենում, տրեսնում մին ուրան պալատան լավ պալատ ա շինած ըտեղ։ Մընում ա մաթ մընացած, փառթ տրեռած, կործը տանիլ տրված։

Էն մին օրը կոզնուն մարը էլհա քյընում ա հարսնըքարին նրստում։ Կյամ ըն տանում թաքավերին կոշտը։

Մարն ասում ա. — Թաքավերը ապրած կենա, ասածըտ կազարալ ընք, մըհեկ հի՞նչ կասիս։

Թաքավերն ասում ա. — Մըհեկ էլ էս ղաշանգյ պալատին առաչին մին հենց բախչա-բաղ շինի, վրեր աշխարքիս բարը-նուրարը մեչին ինի, աշխարքիս ծաղիկնին, ղուշերը մեչին ինին...

Կոզնուն մարը վրեր լըսում ա, քուտուփրեշմանն ետ ա տրեռնում, կյամ տոն, լոխ կոզնուն նաղլ անում, ասում. — Մըհեկ էլ թաքավերը մին հենց բախչա յա օղում, վրեր աշխարքիս բարը-նուրարը մեչին ինի, նախշուն ղուշերը, ծաղիկնին մեչին ինին։

Կոզնին ասում ա. — Ա՛ հար, եր կաց քյինի համին էն տրեղը, վրեր ինձ քրթալ ըս, ընդեղ կաղնի, ասի. «Կոզնին մին տիրև ա օղալ»։ Տիրևը եր կալ, պրեր քրցի թաքավերին տանը առաչին շինած մըեր պալատին հայաթը։

Իտի էլ անում ըն։ Ընդեղ մին լավ բաղ ա տրեռնում փանտաննեբրավ, ծրլվրլալիս ղուշերավ, հո՞ւ վա գյուղում էլ հինչերա՞վ։ Վրեր թաքավերը էքսը տրեսնում ա, օղում ա, թա օշը տանի։

Էն մին օրը էտ կընեգյը էլհա քյընում ա թաքավերին դրրբրգին

Հարսնըքարին նըստըմ։ Ծառեքը կյամ ըն ըտրան տանըմ Թաքավերին կոշտը։

Թաքավերն ասըմ ա.— Թա էտ պալատին լոխ պատերը կըծակի Թանգյակին գյարոցավ, լա՛վ-լա՛վ սարքերավ, մախմուր տըրըրոթկոցավ, լա՛վ ճուղուպրի բատըլներավ, վըեսկավ, արծաթավ, էն վախտը ախճիգյըս քու տըղին կըտամ։

Մարը կյամ ա նաղլ անըմ լոխ։ Կողնին ասըմ ա.— Ա՛ հա՛ր, կըյինիս ինձ ըրթած տեղը կաղնիս, ասիս. «Կողնին մին կըտոր մախմուր ա օղըմ»։ Մախմուրը պերելու յըն քյըեզ տան, յոր կոնիս պըրիս, քըցիս էն պալատին մաչը։

Իտի էլ անըմ ըն։ Պալատին օթախնին լցնըվըմ ա Թանգյակին սարքերավ, իլա՛ծ-չիլա՛ծավ։ Կողնուն մարը մին էլ ա քյընըմ Հարսնըքարին նըստըմ։ Կյամ ըն գյըղոտենքյը ըտրան տանըմ Թաքավերին կոշտը։

Թաքավերն ասըմ ա.— Դե, մըհեկ ախճիգյս տամ ըմ, քյինա տըղին պըեր, տըեսնամ։

Էտ կընեգյը կյամ ա տոն, տըղին տինըմ մին մըժմահու յրա, տանըմ, ասըմ.— Թաքավերն ապրած կըենա, հեսե իմ տըղաս։

Թաքավըրըն ասըմ ա.— Կողնի յա, թա հու վա, վըեր խոսկ ըմ տըվալ, պիտի ախճիգյըս տամ։

Ըտահանք օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ։ Ամմեն քըշեր կողնին մին կյեղեցիկ տըղա յա տըեռնըմ, ցերեկը էլհա կողնի յա տըեռնըմ։ Կողնին հա՛լա մինչև ուրա՛ն կընգանը նըհետ կապվիլը ընդրան ասած ա ինըմ, թա մինըն ու մինը գյիդա՛ էտ պըենը, վըեր ինքը մարթ ա տըեռնըմ, ինքը հավիդյան կորչելու յա։

Հունց ա պըտահըմ, Թաքավերին ախճիգյը ուրա՛ն մարթին կյեղեցիկ ինիլը նաղլ ա անըմ ուրա՛ն հընգերունցը քըշտին, ըտրանավ օղըմ ա պարծանք համարի, վըեր ուրա՛ն մարթը քըշերը մին ղա՛շա՛նգյ տըղա յա տըեռնըմ, վըեր խաթի, վըեր ինդի, հու վա գյուղում էլ հի՞նչ...

Ըտրանա հետը կողնին քյընըմ ա, կորչըմ։

Ախճիգյը ման ա կյամ, ման, էլ քըթնըմ չի։ Էտ ախճիգյը արկաթի տըրեխնի յա շինիլ տամ, մին արկաթի կավազան էլ նըհետը յոր օնըմ, քյընըմ։

Քյընըմ ա քյընըմ ճընապարին հարցըփորց անըմ, վըեչ մինը տըեղը գյուդում չի։ Արկաթի տըրեխնին վըեր մաշըմ ա, ետավ վըեննըտեպիգյ ա շոռ կյամ մարթին հըետան։ Ըտրա շո՛րերը ճըրղոտվըմ ա, վըեններըը ճըքճըքոտըմ, իրեսը արևն էրըմ, էլհա ետ չի տըեռնըմ,

խտի սոված-ծարավ ման ա կյամ սարան՝ սար, ծո̆րան՝ ծո̆ր, անց ա կընէնըմ փըշփըշոտ տեղերավ, նեղ կածաններավ, ծըմակներավ, կյետերավ, վըեչ մին տըեղ մարթին ճարըմ չի։ Ախրը վըերշը մին հեռու ճընապարհի նըղացած եր ա ընգնըմ։ Մին էլ վըեր օշը կըլո̈խն ա կյամ, տըեսնըմ ա ուրա̈ն եր ընգած տըեղին քըշտին մին խոր փոս կա։ Էտ փոսըն ա նի մըննըմ, տըեսնըմ մին տոռնը։ Թաքավերին ախ-ճիգյը տոռնը պենըմ ա, նի մըննըմ, տըեսնըմ մին օթախ, էրկու կարավաթ տիրա̈ծ։

Ասըմ ա.—Թա̈լքա̈ս իմ մարթըս ըստըե՞ղ ա, նի մըննիմ էս կա-րավաթին տակը, թաքուն եշիմ։

Վըեր մըթնըմ ա, տըեսնըմ ա, էսա մարթը եկավ, ուրա̈ն կա-րավաթին թեքյ ընգավ։ Թաքավերին ախճիգյը կյողըը կացած տըե-ղան տուս ա կյամ, մարթին վիզավը ընգնըմ, ղաչանք-պըղատանք անըմ, վեր էտ տըեռնա, կյա պալատը։ Իտի մին կերպ համոզըմ ա։

Կողնում մարը ուռութանա տըեսնըմ ա, վըեր ուրա̈ն տըղան փախալ ա։ Տըես ա շոռ կյամ, տըեն ա շոռ կյամ, ճարըմ չի։ Դա̈ստի գյուղում ա, վըեր թաքավերին ախճիգյը կինի տարած։ Ընկըսըմ ա ըտրանց հետան քյինիլը։

Թա թաքավերին ախճիգյը մին վերստ ա փախչըմ, մարը տասը վերստ ա յրա հըսնըմ։ Վըեր ըտրանք տըեսնըմ ըն՝ մարը յրա յա հը-սալ, մինը ծառ ա տըեռնըմ, մինը՝ օխծ, յրան փըթաթված։ Ըտրանա ետը վըեր մարը հըռանըմ ա. էլհա ուրա̈նց ճընապան շարունա-կըմ ըն։ Վըեր մարը էլհա կյամ ա, հըսնըմ, մինը ճեղաց ա տըեռնըմ, մինը՝ ճըղացպան։ Վըեր մարը հըռանըմ ա, էլհա մարթ ըն տըեռ-նըմ, փախչըմ։

Վըեր մարը էտ տըեսնըմ ա, ասըմ ա. — Կա՛ցիք, փախչի՛լ մի՛ք, էլհա մարթ տըեռիք, թա տուք ո̈ւրո̈ւր արժան ըք, յըես ծըեզ կփըսակիմ։

Ըդրանք կաղնըմ ըն։ Մարը տըեսնըմ ա, վըեր ո̈ւրո̈ւր արժանի յըն, ասըմ ա. — Քյնա̈ցիք ծըեզ հետի բախտավեր ապրեցեք։

Մըեր էն սըրսարոտ, ղա̈շա̈նգյ Ղարաբաղին Ղըղղալա շենին կյինա̈ն իրեք ըստաքան լըցած ա, տիրած սոտլին, եր կալիք, խմե-ցիք, էս մին ստաքանը՝ ասողին, էս մին ստաքանը՝ լսողին, էս մին ստաքանն էլ՝ էս հաքյա̈թնին լուս աշխարք քըցողին։ Էտ պըծը-պածի անըմ, էտ արևին համ նան հոտը, մեչին կյինա̈ն հու վըեր խմի, էլ մահ, մըեռնիլ չօնի, չո̈նքյի անմահական ա։